01/10.1/6919-10
2010-06-15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Ռուզաննա Առաքելյանի, Վահան Հովհաննիսյանի, Արմեն Ռուստամյանի և Արա Նռանյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ։

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերով նախատեսվում է հողերի յուրաքանչյուր միավորի նպատակային նշանակության փոփոխումն իրականացնել հնագիտական

պեղումների պարտադիր պայմանով։ Առաջարկությունն առաջին հերթին ենթադրում է լրացուցիչ ծախսերի անհրաժեշտություն՝ ներառելով նաև չհիմնավորված պեղումների որոշակի քանակություն՝ առանց նշելու պեղումների ֆինանսավորման աղբյուրներն ու իրականացման ժամկետները։ Արդյունքում այդ աշխատանքները կարող են երկարաձգվել անորոշ ժամկետով՝ որոշակի վնաս պատճառելով ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև կարող են առաջացնել ավելորդ քաշքշուկներ և կոռուպցիոն ռիսկեր։ Հայաստանի Հանրապետության կառավարությունը կիսում է օրենսդրական նախաձեռնության հեղինակների մտահոգությունը նոր հուշարձանների հայտնաբերման, շինարարական աշխատանքների ժամանակ հուշարձանների վնասման հետագա վտանգից խուսափելու և հուշարձանների պահապանության խնդիրների կարգավորման անհրաժեշտության հարցում, սակայն գտնում է, որ նախագծում պետք է հստակ ամրագրվեն առաջադրված հարցադրումների պատասխանները։

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով պատասխանատվություն է նախատեսվում տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ՝ վերջիններիս պահպանության տակ գտնվող հուշարձանները վնասելու դեպքում։ Հարկ ենք համարում նշել, որ վարչական պատասխանատվության նախատեսումն իրավաչափ չէ, քանի որ, համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի, հուշարձանների պահպանությունն ամրագրված է որպես կամավոր լիազորություն, այլ ոչ թե պարտադիր կամ պատվիրակված։

Բացի դրանից՝ ներկայացված օրենքների նախագծերն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված օրենսդրական տեխնիկայի կանոններին։

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ օրենքների նախագծերի փաթեթի ընդունումը լրացուցիչ հիմնավորման կարիք ունի և ներկայացված տեսքով ընդունելի չէ։

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի տեղակալ Աշոտ Մուսայանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-897-11.05.2010-ԳԿ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եւ օգտագործման մասինե Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին

Հոդված 1. Պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եւ օգտագործման մասին (1998 թ. նոյեմբերի 11, ՀՕ-261) Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 24 -ը լրացնել նոր հետեւյալ բովանդակությամբ դ) կետով.

« դ) հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու ժամանակ՝ հետագա աշխատանքների ընթացքում նոր հուշարձանների հայտնաբերման եւ դրանք վնասելու հետագա վտանգից խուսափելու նպատակով։ե։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրը։

Նախագիծ
Պ-897[1]-11.05.2010-ԳԿ-010/0

AJV-22-28 2010-06-10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացում կատարելու մասին

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի (2001թ. մայիսի 2, ՀՕ-185) 7-րդ հոդվածի 2-րդ մասի «նպատակային նշանակությունը» բառերից հետո լրացնել.

« ,կառավարության սահմանած կարգով հնագիտական պեղումներ կատարելուց հետո»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրը:

Նախագիծ
Պ-897²-11.05.2010-ԳԿ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին

Հոդված 1. Վարչական իրավախատումների վերաբերյալ (1985թ.Դեկտեմբերի 06, ԳԽ, այսուհետ՝ օրենսգիք) Հայաստանի Հանրապետության օրենսգրքի հոդված 54 -ի 3-րդ պարբերության «հարյուրհինսնապատիկի չափովե բառերը փոխարինել «հինգհարյուրապատիկի չափով ե բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի հոդված 95-ը շարադրել նոր խմբագրությամբ.

«*Հոդված 95. Պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության եւ օգտագործման կանոնները խախտելը*

Պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության եւ օգտագործման կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչեւ քսանապատիկի չափով եւ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հիսնապատիկի չափով:

Տեղական ինքնակառավարման մարմինների պահպանության տակ գտնվող հուշարձանները վնասելը

առաջացնում է տուգանք տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց նկատմամբ հարյուրհինսնապատիկից մինչեւ երկուհարյուրապատիկի չափով։ե

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրը։

ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Փաթեթը նպատակ ունի կարգավորելու հուշարձանների հայտնաբերման, պահպանության եւ օգտագործման հարաբերությունները։

ՀՀ Հողային օրենսգիրքը սահմանում է հողերի նպատակային նշանակության փոփոխության կարգը։ Նպատակային նշանակությունը փոփոխվում է միայն կառավարության որոշումով։

Սակայն հնագետների հետ քննարկումներից պարզ է դառնում, որ կարգավորված չեն այն խնդիրները, որոնք կապված են նպատակային նշանակության փոփոխության հետեւյալ մասի հետ։

Հինականում թույլտվությունը տրամադրվում է հուշարձանների ցուցակներից ելնելով՝ եթե նշված չէ , որ տվյալ հողատարածքում հուշարձան կա, ապա այդ հողամասում կարելի է կատարել հողի նպատակային նշանակության փոփոխություն եւ հնարավոր է դառնում կատարել շինարարական աշխատանքներ։ Իսկ երբ աշխատանքների ընթացքում հայտնաբերվում է հուշարձան , եթե իհարկե սեփականատերը բարեխիղճ է եւ հայտնում է համապատասխան մարմիններին, արդեն հուշարձանը այնքան վնասված է լինում , որ վերականգնելը անհնար է դառնում, քանի որ արդեն հողի շերտը վնասված է լինում եւ ամբողջ ինֆորմացիան անհնար է դառնում վերականգնել։ Այս դեպքում որեւէ պատիժ կիրառելը կարծում ենք չի կարող փրկել հուշաձանը ։

Այդ իմաստով նպատակային նշանակությունը փոխելուց առաջ ճիշտ է անցկացնել հնագիտական պեղումներ՝ /դիագնոստիկա/ հնարավոր նոր հուշարձանների հայտնաբերման նպատակով, այնուհետեւ կատարել մնացած աշխատանքները։

ՈՒսումնասիրել ենք Եվրոպական երկրների փորձը՝ տվյալ ոլորտի օրենսդրությունը։ Բոլոր զարգացած երկրներում կիրառվում է այս փորձը եւ նույնիսկ օտարերկրյա կազմակերպությունները, որոնք գործունեություն են ծավալում ՀՀ- ում, նրանք անկախ ՀՀ օրենքի պահանջից դիմում են համապատասխան մասնագետներին, ստանում հավաստագիր՝ /սերտիֆիկատ/ առ այն, որ նշված հողակտորում հուշարձան չկա, այնուհետեւ կատարում են իրենց աշխատանքները։

Կարծում ենք, որ այս օրենսդրական ներդրումը մեր իրավական համակարգում դրական ազդեցություն կունենա Հայաստանի Հանրապետությունում նոր հուշարձանների բացահայտման եւ պահպանման գործում։

Տեղական ինքնակառավարման մարմիններին ՀՀ օրենսդրությամբ (Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենք, Պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եւ օգտագործման մասին Հայաստանի Հանրապետության օրենք եւ այլն) արդարացիորեն տրված է հուշարձանների նկատմամբ պահպանության լիազորություն, քանի որ Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է «թանգարան բաց երկնքի տակե եւ անհնար է ամեն հուշարձանի պահպանության համար «նշանակել հսկիչե։

Տեղական ինքնակառավարման մարմիններին է հանձնված նաեւ հողամասը ոչ նպատակային նշանակության օգտագործեումը եւ հողատեսքի ինքնակամ փոփոխելը չկանխելը։

Հողատեսքի ինքնակամ փոփոխման ժամանակ տեղական ինքնակառավարման մարմինները տեղյակ են լինում դրա մասին եւ տեսականորեն անհնար է , որեւէ համայնքում կատարվեն հողային աշխատանքներ եւ տեղական ինքնակառավարման մարմինները տեղյակ չլինեն։ Այդ պատճառով նման դեպքերը կանխելու միջոց է նախատեսել օրենսդիրը՝ տեղական ինքնակառավարման մարմիններին խախտման համար վարչական պատիժ նշանակելը։

Բայց ցանկացած պատիժ պետք է լինի համարժեք։ Իսկ ներկայիս հողատեսքի ինքնակամ փոփոխության համար օրենսդրությամբ սահմանված վարչական պատիժը շատ քիչ է, իսկ հուշարձանների պահպանության համար ընդհանրապես սահմանված չէ, որը կարծում ենք օրենսդրական բացթողում է։

Ստեղծվում է մի պատկեր , որ տրված է լիազորություն՝ հուշարձանների պահպանության , բայց նախատեսված չէ սանկցիա /պատիժ/ , չկատարելու կամ թերանալու համար, այսինքն ստեղծված չէ օրենքի կատարման երաշխիքներ։

Օրենքի նախագծերի փաթեթի ընդունումը կկարգավորի նոր հուշարձանների հայտնաբերման, շինարարական աշխատանքների ժամանակ հուշարձանները վնասելու հետագա վտանգից խուսափելու եւ հուշարձանների պահապանության խնդիրները։